ՁԵՌԱՐՈՒԵՍՏԻ ԴԱՍԱՒԱՆԴՈՒՄԸ ԺԹ. ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԷՍԻ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒՄ (Ակնարկ)

ԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ
amkhitaryan89@gmail.com

Վանեցի աղջիկները ցուցադրում են մանելու, հիւսելու գործընթացը (*Life and Light for Woman*, 1905:35, էջ 50)

ՄՈՒՏՔ

ԺԹ.-Ի. դարերում արեւմտահայ իրականութեան տարբեր վայրերում ձեռարուեստի որոշ ճիւղերի զարգացումը պայմանաւորուեց կրթամշակութային կեանքի ծաղկմամբ: Դպրոցների ու *Աղջկանց* վարժարանների ստեղծումը հիմք դրեց նաեւ արհեստների յետագայ զարգացմանը: Կարեւորելով դրանց գոյութիւնը՝ ուսուցանուող առարկաների կողքին տեղ գտան արհեստագործական մի շարք դասանիւթեր՝ ասեղնագործութիւն, գորգագործութիւն, մանածագործութիւն, դերձակութիւն, կօշկակարութիւն եւն.:

Արհեստների եւ արուեստի զարգացումը նպաստեց տուեալ շրջանի բնակչութեան տնտեսութեան զարգացմանը, հասարակութեան առաջադիմութեանը[1]: Արհեստների ու ձեռագործ աշխատանքների դասանիւթերը դասաւանդւում էին հայ վանքերին կից աղջկանց վարժարաններում, յետագայում նաեւ Ամերիկայից, Եւրոպայից ժամանած ու Վասպուրականում հաստատուած միսիոնարների հիմնած կրթական հաստատութիւններում: Գլխաւոր նպատակն էր իգական սեռի դաստիարակչական գործը: Աղջկանց վարժարաններում ասեղնագործութեան յատուկ դասաժամեր են գործել եւ մասնակցութեան համար տրւում էին վկայականներ[2]:

Յօդուածի նպատակն է անդրադառնալ Վան-Վասպուրականի այն կրթական հաստատութիւններին ու որբանոցներին, որտեղ դասանիւթերի շարքին տեղ յատկացուեց նաեւ ձեռարուեստի ուսուցմանը: Կրթական համակարգում նրանց որդեգրումը նպաստեց արուեստի մի շարք ճիւղերի զարգացմանը, ստեղծուեցին ձեռագործ արուեստի բազմաթիւ նմուշներ: Այս երեւոյթը կարեւորւում է նաեւ նրանով, որ համայնքային, խմբակային հաւաքական գործունէութիւնը ստիպեց պահպանել, զարգացնել ու շարունակաբար փոխանցել դարերի ընթացքում զարգացման ուղի անցած, հին հայկական ստեղծագործական արուեստի կուտակած հարուստ փորձը, աւանդական ոճը, ձեւերը, տարածաշրջանում տարածուած ասեղնագործութեան կարատեսակները:

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՐԵՒԱՆ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

Նախքան կրթամշակութային գործունէութեան ձեւաորումը ձեռագործ աշխատանքները կատարուել են տան պայմաններում: Կարեւոր տեղեկութիւն է պահպանուել Այնթապի ձեռագործութեան մասին, այստեղ՝ 1840ականներից, մինչ կանոնաւոր դպրոցների գոյառումը, սեփական նախաձեռնութեամբ, մի շարք կանայք տնային պայմաններում սովորեցրել են ասեղնագործութիւն, փոխանցել գիտելիքները նոր սերնդին[3]:

Վանի Վարժարանի ուսուցչուհիներ (Life and Light for Woman, 1892:22, էջ 112)

Կրթական հաստատութիւնները ԺԹ. դարի երկրորդ կէսից ցանցի պէս տարածուեցին Օսմանեան Կայսրութեան հայաբնակ գրեթէ բոլոր քաղաքներում: 1875ին Պոլսի մի խումբ ուսեալ կանայք հիմնեցին Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնը (ԱՀԸ), որը արեւմտահայ իրականութեան մէջ կանանց կրթասիրական-բարեգործական ընկերութիւնների շարքում առաջին կառոյցն էր: Նրա նպատակն էր Օսմանեան Կայսրութեան հայաբնակ գաւառներում եւ յատկապէս Կիլիկիայում բացել դպրոցներ, նպաստել հայ աղջիկների դաստիարակութեան եւ կրթութեան գործին՝ գաւառական կրթական հաստատութիւններ հիմնելու եւ դրանց շարունակական գործունէութիւնն ապահովելու միջոցով[4]: Ընկերութիւնը վարժարաններ բացեց Մանազկերտում, Մուշում, Սասունի Հազգոյում, Զէյթունում եւն.: Այնտեղ դասաւանդւում էին նաեւ ձեռագործ, կարուածեւի առարկաներ, գորգագործութիւն, կարպետագործութիւն, ձեռային այլեւայլ արհեստներ:

Յետագայում ԱՀԸ գործադիր ժողովների նիստերից մէկում, ատենապետ Զապէլ Ասատուր(եան)ի կողմից հրաւիրուած էր Վանի Երամեան Վարժարանի ուսուցչապետ Համբարձում Երամեանը, որտեղ որոշում է ընկերութեան գործունէութիւնը ընդլայնել նաեւ Վանի աղջկանց վարժարաններից մէկում: Ուսուցչապետի խորհրդով այդ վարժարանը պէտք է լինէր Սանդխտեան Վարժարանը, որտեղ ընկերութեան հովանաւորութեամբ աւելի բարձր վարժուհիներ պատրաստուէին եւ զարկ տրուէր *«մատանց գեղարուեստին»*[5]: Ծրագիրը, սակայն, անկատար մնաց:

1873ին Պիթլիս ժամանած ամերիկացի քոյրեր Շարլոթ եւ Մերի Էլիները բացեցին Մաունթ Հոլիոքի աղջկանց վարժարանը[6]: Գեղարուեստական բարձր ճաշակով օժտուած Միս. Շարլոթը աղջիկներին սովորեցնում էր կարուածեւ, նրբահիւս ասեղնագործութիւն, ինչպէս նաեւ գծագրութիւն[7]:

1880ականներից աղջկանց յատուկ ձեռարուեստի յարկաբաժին է գործում Խարբերդի Եփրատ Քոլէճում: Թէ՛ այստեղ եւ թէ՛ "վարի թաղ"ի աղջկանց վարժարանում սովորում էին ձեռագործ, կար ու ձեւագիտութիւն[8]:

ԱՀԸի գործունէութեան շնորհիւ Մուշում 1882ին բացուեց աղջկանց վարժարան, որտեղ դասաւանդել են ե՛ւ Պոլսից ժամանած վարժուհիներ ե՛ւ տեղացիներ: ԺԹ. դարավերջ-Ի. դարասկզբին Մուշ քաղաքում գործում էր եօթ հայկական դպրոց, որոնցից հինգը՝ թաղային եկեղեցիներին կից: Միւս երկուսից մէկը օրիորդաց դպրոցն էր, որ հիմնադրուել էր Յովսէփ Իզմիրեանցի կտակով 1884ին, իսկ միւսը՝ Միացեալ Ընկերութեան վարժարանը, թաղային դպրոցների համեմատութեամբ՝ աւելի բարձրորակ էր[9]:

Ասեղնագործութիւն ու ձեռագործ աշխատանքներ դասաւանդւում էին Մեզրէի հայ կաթոլիկ աղջկանց վարժարանում, որը հիմնուել էր 1895ին: Մեզրէի՝ 1905ի գերման աղջիկների թիւ 1 որբանոց-դպրոցում գործում էր կարի ու կարկատանի բաժին[10]:

Մարտինի մէջ գործող միսիոնարուհի Ժանէթ Էմերիքը 1907ին մեկնարկում է «ասեղնագործի արտադրութիւն»ը՝ օգնելու համար կանանց ու աղջիկների, որպէսզի ապրուստ վաստակեն կայսրութեան մէջ տիրող զրկանքի ու դժուար կացութեան պայմաններում: Ձեռագործները ԱՄՆ էին ուղարկւում ու վաճառւում[11]: Նոյն պատկերը տիրում է նաեւ Ուրֆայում, որտեղ 1895ի դէպքերից յետոյ ամերիկեան որբանոցի մէջ հաստատւում է ասեղնագործութեան արհեստանոց՝ նախաձեռնութեամբ Քորինա Շաթըքի, որ փրկարար մեծ դեր կատարեց Ուրֆայի տնտեսական կեանքում: Արհեստանոցը յայտնի դարձաւ «նշխին տուն» անունով: Ասեղնագործ նմուշներն ուղարկւում էին Բրիտանիա եւ ԱՄՆ, ինչը հարիւրաւոր կանանց ու աղջիկների համար ապրուստի միջոց դարձաւ[12]:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ *ՕՐԻՈՐԴԱՑ* ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

Վասպուրականում մինչեւ 1830ականները չեն եղել կանոնաւոր դպրոցներ: 1820ականներից սկսւում է եկեղեցական կառոյցներին կից դպրոցներ բացելու փորձը. այնտեղ աշխատելու են հրաւիրւում Վանում ծնուած եւ Պոլսում, Երուսաղէմում կրթութիւն ստացած հայորդիները: 1840ականներին Վանում կար արդէն վեց դպրոց, որոնք կոչւում էին ծխական[13]:

Վասպուրականում կրթական կեանքը ներկայացուած է շրջաններով, որոնցից էր՝ «*Ջուլիակ վարժոց»ի* շրջանը՝ ԺԷ. դարից մինչեւ ԺԹ. դարի առաջին կէսը: Այն իրականացւում էր կտաւագործի գործարաններում, որոնք նոյն այս ժամանակաշրջանում գոյութիւն ունէին Վանում: Այս *վարժոց*ներում պատանիները արհեստների հետ ուսանում էին, ընթերցում գիր, թուանշան սովորում[14]: Քաղաքի մէջ գրել-կարդալ սովորում էին միայն տղաները ոստայնանկութեան գործատներում: Խրիմեան Հայրիկը նոյնպէս գրել-կարդալ սովորել է իր հօրեղբօր կտաւի հորերի աշխատանոցում՝ ոստայնանկութիւն սովորելիս: Ամէն թաղ ունէր հիւսուածեղէնի մեծ եւ փոքր

արհեստանոց, որտեղ 7-15 տարեկան տղաներից ոմանք այս արհեստանոցների մէջ էին սովորում գիր, տարրական ընթերցանութիւն[15]:

Վանի իգական սեռի կրթութեան հարցում նշանակալից դեր ունեցաւ Խրիմեան Հայրիկը: Ապագայ մայրերին կրթելու գործը գտնւում էր նրա եւ նրա շրջապատող մարդկանց ծրագրերում: Դեռ 1852ին Վանում փորձ է կատարւում աղջիկների դպրոց բացել, սակայն չի յաջողւում: Հայրիկը հաստատապէս մնում էր այն կարծիքին, որ մայրը «լուսոյ տաճար է», ամէնից առաջ պէտք է կրթել մայրերին[16]:

Վանի ողբանոցը (*The Missionary herald/ American Board of Commissioners for Foreign Missions*, 1910:cvi, էջ 223)

1857ին Խրիմեանի ջանքերով Վանի Վարագայ վանքում բացուեց «Ժառանգաւորաց» երկրագործական վարժարանը: Մասնագիտական այս վարժարանի նպատակն էր՝ նախ կրթել ու դաստիարակել հայ մանուկներին, նրանց տալ գիւղատնտեսական գիտելիքներ[17]: 1870ին վերջապէս, Խրիմեանի երազանքը կատարուեց, նա հիմնեց աղջկանց առաջին վարժարանը Հայաստանի մէջ, եւ առաջին անգամ արծարծեց իգական սեռի կրթութեան հարցը[18]: Այգեստանում նրա հաստատած անդրանիկ վարժարանի՝ *Սանդխտեան Վարժարանի* բացման հանդէսը կատարուեց 25 Յուլիսի 1870ին, Ս. Սանդուխտի տօնի օրը: Վարժարանն ունեցաւ 150 աշակերտուհիներ[19]: Այն հիմնուեց Պոլսում գործող «Սանդխտեան Ընկերութեան» աջակցութեամբ: Ուսուցչական կազմի մէջ էին Աճէմեան քոյրերը, Եղիսաբէթ եւ Մարինէ, Աննիկ եւն., ովքեր յատուկ նուիրուածութեամբ կատարեցին իրենց գործը[20]: Սանդխտեանի սաները՝ նպատակադրուած նուիրուելու ազգային կրթութեան տարածմանը, յետագայում դասաւանդում էին այլ դպրոցներում, ինչպէս օրինակ «Ս. Թարգմանչաց» երկսեռ ուսումնարանում:

Մինչեւ 1884 Սանդխտեան Վարժարանը սեփական շէնք չունէր: Այդ տարում, Մկրտիչ Սանասարեանի միջոցներով նորաշէն եկեղեցուց ոչ-հեռու շէնք կառուցուեց եւ նրա մօր անունով կոչուեց «Մայրամեան»[21]: Բազում դասանիւթերի կողքին այնտեղ դասաւանդում էին ձեռագործ, կարուածեւ: Օրիորդաց դպրոցները տեղական, հաւաքական ուժերով էին կառավարւում: «Սանդխտեան»ի նախկին սանուհիները գիտակցելով Վանի իգական սեռի եւ ապագայ դաստիարակութեան անհրաժեշտութիւնը, ցանկանալով բարենպաստ գործ ստեղծել՝ 1890-91ին Այգեստանում կազմեցին «Վանուհեաց Ընկերութիւն»ը[22], ղեկավարութեամբ Իսկուհի Խրիմեանի: Ընկերութիւնը գործեց մինչեւ 1915, երբ գաղթը սկսեց դէպի Կովկաս, նա Թիֆլիսում

եւ Երեւանում եւս ձեռագործի արհեստանոցներ բացեց, որոնք գործեցին մինչը 1921 եւ լուծարուեցին Հայաստանի խորհրդայնացման օրերին[23]:

Վարժարաններ բացուեցին նաեւ Ալիւր, Կուսենց, Խառակոնիս, Կէմ, Գործօթ եւ այլ գիւղերում: Ալիւրի դպրոցը բացուեց 1876ին, Մկրտիչ Փորթուգալեանի ջանքերով[24]:

Ալիւրցի հայ կանայք ասեղնագործ աշխատանքներով (Հայոց Ազգագրութեան Թանգարան, լուսանկար Հ՝ 5595/106)

1880ին Վանում բացւում է Երամեան միջնակարգ դպրոցը[25]: Այնտեղ աշակերտները սովորում են կահագործութիւն, կօշկակարութիւն, դերձակութիւն եւ այլ արհեստներ, որոնք ամուր հիմք են դառնում տեղական արհեստների պահպանման համար[26]:

1881ին բացուեց Շուշանեան Օրիորդաց Վարժարանը, իսկ երկու տարի անց՝ 1883ին նաեւ Գայիանեան Օրիորդաց Ուսումնարանը, որը գտնւում էր Խրիմեան Հայրիկի տան մի հատուածում, որտեղ սովորում էին թաղի աղջիկները[27]: Այս ուսումնարանների առաջին շրջանաւարտներից տաս օրիորդներ շարունակեցին դասաւանդել նոյն վարժարաններում[28]: Հայրիկի մասնաւոր բնակարանում է հաստատուած եղել նաեւ Յայնկոյսների աղջկանց վարժարանը, որը նոյնպէս հիմնադրուել է նրա կողմից[29]:

Վանի Ս. Պօղոս-Պետրոս եւ Ս. Առաքեալ յարակից եկեղեցիները բերդաքաղաքի կենտրոնում են, որի բակում էլ կառուցուել է երկսեռ դպրոց եւ այստեղ փոխադրուել նաեւ Շուշանեան Օրիորդաց Ուսումնարանը[30]: Բերդաքաղաքից դէպի արեւելք՝ Արարուց Ս. Աստուածածին եկեղեցու արեւմտեան կողմում 1885-86ին կառուցուեց «Ս. Թարգմանչաց» երկսեռ ուսումնարանը, որի ստորին յարկում գորգագործութեան սրահ էր: Վան քաղաքի երկու մասում՝ Այգեստանում եւ բերդաքաղաքում կար հինգ օրիորդաց ուսումնարան[31], որտեղ ուսանում էին միայն ձեռագործութիւն. գիտութեան դասեր չէին դասաւանդւում[32]: ԺԹ. դարի վերջին դասանիւթերի կողքին տեղ գտաւ նաեւ գորգագործութիւնը. *«1894ին ձեռագործի եւ այլ առարկաների հետ մտցուեց աղջկանց պարապմունքի մէջ նաեւ գորգագործութեան արհեստը: Այս արհեստի համար նիւթը մատակարարում էր պ. Ս. Տարբինեան: Այս գորգագործութեան պարապմունքը տակաւին բացառիկ առարկայ լինելով, պատրաստուեցաւ 3-5 արշունի երկարութեամբ, ճաշակաւոր, որոնցից մինը գնեց Վանայ կուսակալ Բահրի փաշան ուղարկելով Կ.Պոլիս որպէս նմուշ Վանայ գործուածների, միւսները մնաց Տարբինեանի մօտ»*[33]:

Երկսեռ որբանոցներ հիմնւում են նաեւ Վան քաղաքի մերձակայ վանքերի կողմից: Վանի մերձակայ Ս. Գրիգոր վանքի հոգաբարձութեան կող-

մից հիմնուած աղջկանց որբանոց-վարժարանում հոգացուող՝ 50-80 որբուհիներին տարրական ուսման կողքին դասաւանդում էին ձեռագործ, կարուձեւ, գորգաշինութեան արհեստներ եւն.[34]: Որբանոցը Այգեստան փոխադրուելով յանձնւում է Աղաւնի Մկրեանի հովանաւորութեանը[35]:

Վանում ձեռագործի դասաւանդման զգալի աւանդ են ունեցել հայ կանայք ու աղջիկներ՝ Սեւօն (Իսկուհի Համբարձումեան), Սողոմէ Ջրբաշեանը, Զարուհի Շալճեանը, Հռիփսիմէ Նալպանտեանը, Արաքսի Սաֆրաստեանը, ովքեր տարիներ շարունակ կարուձեւ են ուսուցանել հայ օրիորդներին:

Վանի հերոսամարտի հերոսուհիների՝ Շալճեանի, Նալպանտեանի, Ջրբաշեանի շնորհիւ Վանում կազմւում է «Վասպուրականի Կանանց Միութիւն»ը, որը խթանում է Վանի կանանց զարգացմանը եւ առաջադիմութեանը, աջակցում ինքնապաշտպանութեան պայքարին: Միութիւնը ապրիլեան եղեռնից յետոյ հազարաւոր որբերի իր խնամքի տակ վերցրեց, Երեւանում հիմնեց Վասպուրականի կարուձեւի ու ձեռագործի արհեստանոց[36]:

ՁԵՌԱՐՈՒԵՍՏԸ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻՍԻՈՆԱՐՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Կրթական գործում կարեւոր դեր ունեցան Ամերիկայից ու Եւրոպայից ժամանած միսիոնարները: Ակնյայտ է, որ կրօնաքաղաքական ու բարեգործական գործունէութիւնը միայն շահ չէր կարող հետապնդել, ոմանք անձնուրաց նուիրուեցին այս գործին: Բնականաբար նրանց գործունէութիւնը կ'ունենար հետեւորդներ ի դէմս հայ աւետարանականների, ինչը դէմ էր հայ լուսաւորչական համայնքին եւ յարուցելու էր վերջինիս ընդդիմութիւնը, քանի որ ենթադրում էր տոհմիկ դաստիարակութեան ձեւերի ու հաւատքի խարխլում: Միսիոնարների կիրառած արդի մեթոդները դրական ազդակներ ունեցան հայ կրթութեան որակի վրայ:

1870ականներից Արեւմտեան Հայաստանի բազմաթիւ քաղաքներում կառուցուեցին ընդարձակ քաղաքամաս՝ տարբեր հաստատութիւններով, նրանց թւում՝ նաեւ ոստայնագործարան, կտաւ գործելու համար[37]: Միսիոնարներն ի սկզբանէ հանդիպելու էին խոչընդոտների թէ՛ տեղի լուսաւորչական համայնքի կողմից եւ թէ՛ գաւառների բնակչութեան՝ իգական սեռի կրթութեան հարցի խնդրով. աղջիկն ընկալւում էր որպէս տունը կառավարող ու տնային գործերով զբաղուող էակ[38]: Յատկանշական է, որ այս մասին յիշատակում են նաեւ միսիոնարները, ովքեր նշում են, որ Արեւմտեան Հայաստանի ոչ մի քաղաքում այնպէս պայքար չմղուեց կանանց կրթութեան դէմ ինչպէս Վանում: Պայքարին նպաստում էր նաեւ բողոքականութեան դէմ առկայ կանխատրամադրուածութիւնը. յիրաւի, Վանը գտնուելով Հայաստանի սրտում, լուսաւորչական ուժեղ կենտրոն էր[39]:

Այդուհանդերձ, միսիոնարների հաստատութիւնները յետագայում առանցքային դեր ու նշանակութիւն ունեցան հայերի կեանքում: Այստեղ հիմնականում գործող ձեռարուեստի՝ ասեղնագործութեան առարկաները

հնարաւորութիւն տուեցին 1895ի Համիտեան Ջարդերից յետոյ միսիոնարների նախաձեռնութեամբ հայ կանանց ապահովել աշխատանքով, ինչն ապրուստի միջոցի վերածուեց: Վերջիններս կազմակերպում էին դրանց արտահանումը, վաճառքը: Ձեռագործ իրերի վաճառքը օգնեց միութիւնների համար դրամ հաւաքելուն[40]:

Ամերիկեան միսիոնարութիւնն իր կրօնաբարոյական գործունէութեամբ, իր հաստատած արական ու իգական վարժարաններով Վանում հաստատուեց 1872ից[41]: 1896ի կոտորածներից յետոյ աւելացան օտարերկրեայ դպրոցների աշակերտների թիւը, քանի որ Վանի բնակիչները հնարաւորութիւն չունէին վճարելու հայկական դպրոցների վարձը, ստիպուած իրենց երեխաներին ուղարկում էին միսիոնարների կողմից բացուած դպրոցները: Վանում գործող ամերիկեան դպրոցները յատկապէս օգտակար եղան հասարակ ժողովրդի համար: Ի տարբերութիւն հայկական դպրոցների՝ այստեղ սովորում էին բացառապէս աղքատ խաւի երեխաները կամ որբերը[42]: Այնտեղ սովորող որբերը մեծամասամբ ոչ թէ քաղաքից էին, այլ շրջակայ գիւղերից[43]:

Աշակերտների ուսման վճարը տարբեր կերպ էր իրականցւում: Ոմանք ուսման դիմաց վճարում էին գիւղատնտեսական ապրանք: Գործում էր մէկ այլ կարեւոր տարբերակ եւս՝ աշակերտուհիները իրենք էին աշխատում ուսման վճարը տալու համար՝ կար անելով, հիւսելով, ձեռագործ անելով, գորգ գործելով: Շրջանաւարտներից շատերը դարձան դասաւանդողներ[44]: Վանում ձեռագործութիւնը հայուհու առօրեայի անբաժան մասն էր, նրանց ամէնուր կարելի էր տեսնել աշխատանքը ձեռքներին՝ կա՛մ մանում էին, հիւսում, գուլպայ գործում, *կանվայ*ի (ցանցալաթ) վրայ ասեղնագործում[45]: Այս մասին յիշատակում է նաեւ Երամեանը. Վանի պարտէզների մասին խօսելիս նա նկարագրում է դրանցից մէկի՝ վագըֆի մասին, որը գտնւում էր Թուփրակ-Կալէի ստորոտում: Այս ձորի անտառում Այգեստանի ժողովուրդը Կիրակի օրերին զբօսնելու է իջնում, իսկ բազմաթիւ կանայք լուր օրերին իրենց ձեռագործը այս ծառաստաների մէջ են կատարում[46]:

Ամերիկացի միսիոնարների առաջին առաքելական գործունէութեան անձնուէր գործիչներն էին դոկտոր Ճորճ Ռէյնոլծը եւ միստր Պարնըմը: 1875կաններին հաստատուելով Վանում, նրանք ընդլայնեցին յարաբերութիւնների շրջանակը, սկսեցին հիմնել դպրոցներ[47], արհեստանոցներ, որբանոցներ աղջիկների ու տղաների համար[48]: 1871-1912՝ Ռէյնոլծները Վանի ու շրջակայ գիւղերի մէջ հիմնեցին նախակրթարանների ընդարձակ ցանց, տիկին Ռէյնոլծը՝ աղջկանց վարժարան 1879ին Վանի մէջ, ապա՝ հաստատեց որբանոց-դպրոց-արհեստանոցներ[49]: Նա ղեկավարում էր նաեւ գորգագործների աշխատանքը. վերցնելով հարուստ հարեւաններից գորգեր որպէս օրինակ՝ զբաղեցնում էր կանանց գզելու, մանելու եւ բուրդ ներկելու համար: Ժանեկագործութիւնը սկսուեց վեց աղքատ աղջկայ օգնութեամբ միքանի թէլակոճից՝ յիսուն համարի թէլի, միքանի ասեղից: Այն

վերաճեց տաս սենեակով տան, որը տրամադրել էր անգլիացի մի վաճառական, իսկ աշխատողների թիւը՝ եօթանասունհինգ աղջիկի[50]:

Ռէյնոլծն այստեղ ծաւալած շուրջ 40 տարիների գործունէութեան շառաւիղը հասցնում է Մուշ եւ Սասուն: Նա 1894-97 կոտորածներից յետոյ Այգեստանում բացում է երկսեռ որբանոց: Բացի տղաների դպրոցից կար նաեւ աղջիկների դպրոց, որը *«բոլոր գիտութիւններ չունէր, բայց ապրոր փոխարէն ձեռագործ եւ կար ու ձեւ կը սորվեցնէր»*[51]: Ռէյնոլծի նպատակը միայն որբերին կրթութիւն տալը չէր: Նա օգնում էր որբերին զբաղուել իրենց նախասիրած արհեստներով, որի նպատակով էլ հիմնում է մի շարք արհեստանոցներ՝ դերձակնոց, ջուլհակնոց, կօշկակարնոց, դարբնոց եւն.[52]: Որբախնամ գործունէութիւն էր վարում իր կինը՝ Մարին, ով գուրգուրանքով էր խնամում հայ դժբախտներին, որի համար էլ ժառանգել էր որբերի մայրիկ տիտղոսը՝ Խանում[53]: Ռէյնոլծի երազանքն էր Վանի մէջ մետաքսի մանարան բացելը[54], որը անկատար մնաց կայսրութիւնում տիրող իրավիճակի պատճառով:

Ռէյնոլծի օգնականներից էր միսիոնար բժշկուհի Միս Քեմփելը, ով աշխատում էր որպէս տեսչուհի աղջկանց վարժարանում: 1895ից սկսած թուրքերի ու քրդերի թալանի ու ջարդերի կարեւոր ականատես միսիոնարները խնամատար մարմին կազմեցին Քեմփելի գլխաւորութեամբ՝ օժանդակելու հազարաւոր փախստականներին: Իր մնայուն օգնականների օժանդակութեամբ, նպաստներ էր բաժանում, բժշկական խնամքի բաժին վարում Միս Քեմփելը: Այստեղ կարեւոր է նշել, որ նա մեծ քանակութեամբ բուրդ, բամբակ, դերձան եւ այլ պիտոյքներ գնելով, ամբարելով, գործ հայթայթեց աշխատելու կարող դեռահաս կանանց ու աղջիկների եւ անգործ արհեստաւորների[55]:

Ամերիկացի բողոքական միսիոնարները հայ գաղթականներին ու աղքատներին օգնելու համար զգեստեղէնի, անկողնու եւ այլ պէտքերի համար մեծ քանակութեամբ հում նիւթ են գնում եւ գործել տալիս աղքատներին: Այսպէս՝ *«բամբակէ թէլ մանելու համար կը գործեն 1000 ճախարակ, կտաւ եւ շալ գործելու համար կը բանին 200 հոր, հագուստ կարելու համար կ'աշխատին 100 ընտանիք, 15 վարպետ հագուստ կը ձեւեն, 20 ընտանիք գուլպայ կը հիւսեն, 60 անձ բամբակ ու բուրդ կը զգեն, 70 անձ հինայ կ'ընեն կամ մասրայ կը լեցնեն եւ այլն»*: Հայանպաստ այս գործողութիւնների համար միսիոնարները վարձել էին 5 մեծ տուն[56]:

Նոյն անձնուէր առաքելութեամբ աշխատեցին ամերիկացի միսիոնար ամուսիններ դոկտոր Քլերընս եւ Էլիզապէթ Աշըրները: 1900ականներին Էլիզապէթը մեկնարկում է «ժանեակի արտադրութիւնը», օգնելով որբերին ու այրիներին ձեռագործ աշխատանքներով գումար վաստակել: Հումքը ստացւում էր Եւրոպայից կամ Ամերիկայից, որտեղ եւ վաճառւում էին ձեռագործ իրերը[57]: Իր նամակներից մէկում նա յիշատակում է, որ ժանեակի գործարանում աշխատում են հարիւրաւոր աղջիկներ եւ յատկապէս

ընտրում են նրանք, ովքեր կարիքաւոր են: Ժանեակի արտադրութիւնը մեծ յաջողութիւն ունեցաւ: Նրանց պատրաստած արտադրանքը վաճառքի էր դուրս բերւում արեւմտեան երկրներ[58]:

Ամերիկացի միսիոնարները գաղթից յետոյ, 1917ին իրենց գործունէութիւնը շարունակեցին Արեւելեան Հայաստանում, որտեղ հաւաքուեց գաղթականութեան մի մասը: Երեւանում եւ Ալեքսանդրապոլում նրանք հիմնեցին մի շարք արհեստանոցներ՝ բրդի, բամբակի գործարաններ (Երեւան), շալագործարան (Երեւան եւ Էջմիածին), դերձականոց, հիւանոց եւն.[59]: Ամերիկացի միսիոնարներն իրենց գործունէութիւնը ծաւալեցին նաեւ Թիֆլիսում, որտեղ Նպաստամատոյց Ընկերութեան փախստականների որբանոցում գնահատանքի արժանի աշխատանք է կատարում տիկին Մ. Միքայէլեանը, ով աղջիկներին սովորեցնում է ձեռագործ աշխատանքներ, որոնք հիացմունք էին առաջացնում[60]: Աղջկանց որբանոցներ հիմնւում են նաեւ Տոմինիկեան եւ գերմանացի միսիոնարների կողմից[61]:

Միսիոնարների բարեգործական կազմակերպութիւնների տարած զանգուածային աշխատանքներով ոչ միայն նուազեցին բնակչութեան ընկերային դժուարութիւնները (մանաւանդ որ հիմնականում աղքատ խաւն էր դիմում գործ ստանալու համար[62]), այլեւ ապահովուեց արհեստների, ձեռագործ աշխատանքների զարգացման շարունակականութիւնը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով՝ ժողովրդական արհեստների, ձեռագործ աշխատանքների ներմուծումը կրթական համակարգ, այսինքն, վերջիններիս վերածումը կրթական դաստիարակութեան բաղադրիչի, մի կողմից ապահովում է մշակոյթի զարգացումն ու փոխակերպումները արտաքին, առաջադէմ ազդեցութիւնների արդիւնքում, միւս կողմից, նպաստում է, որ նոր համակարգ ներառնուեն ժողովրդական մշակոյթի, լայն առումով՝ մշակութային ժառանգութեան կարեւորագոյն բաղադրիչ հանդիսացող արհեստները: Եւ վերջապէս, այս իրողութիւնը ցոյց է տալիս, որ չնայած պահպանողականութեանը, հայ իրականութիւնը աստիճանաբար փոխում է նաեւ իր վերաբերմունքը աղջիկների կրթութեան ու հնարաւորութիւնների նկատմամբ: Արհեստների դասաւանդումը կարեւոր դերակատարութիւն ունեցաւ, քանի որ այն, ըստ էութեան, խմբակային, համայնքային գործունէութիւն էր, ինչը թոյլ էր տալիս, որ հաւաքական աշխատանքների կատարողական ձեւերը, տուեալ շրջանի ձեռագործութեան դպրոցի աւանդական ոճը պահպանէին ու փոխանցէին սերնդէսերունդ: Ստեղծագործական նուրբ արուեստը իւրաքանչիւր ազգագաւառում ներկայանում էր առանձնայատուկ դիմագծով, այն է՝ յատուկ ոճի, կարատեսակի, յղկուած, բարդեցուած ձեւերով, ուստի՝ վերջինիս զարգացումն ու պահպանումը հիմքն են կազմում այսօր գոյութիւն ունեցող հայկական մշակոյթի հարուստ գանձարանի:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Արհեստագործական գործունէութեան կարեւորութեան մասին Մ. Նալբանդեանը նշում է. *«Հայոց արհեստագիտութիւնը շատ ողբալի վիճակում է այսօր... Տնտեսական գիտութիւնքը առանց արհեստի օգնութեան չեն կարող գործադրութիւն ունենալ ազգի մէջ: Եւ, եթէ ամէնքն էլ փիլիսոփայ դառնան, այնուամենայնիւ, ազգի աւերակը չի շինուիլ: Փիլիսոփայի ձեռքից չէ գալիս այս կամ այն գործիքը շինել, որին մեծապէս կարօտ է ազգի երկրագործութիւնը եւ վաստակաւորութիւնը, փիլիսոփան չի կարող հոգալ եւ շինել եւ ոչ միւսը այն բաներից, որոնց չլինելը պակաս է այսօր ազգի կեանքի տարապայման խեղճութեան»* (Շ. Ոսկանեան, *Ուրուագծեր Արեւմտահայ Դպրոցի եւ Մանկավարժական Մտքի Պատմութեան 1850-1920, Ա. Հտր.*, Երեւան, 2009, էջ 250):

[2] Հ. Ստեփանեան, *Հայերի Ներդրումը Օսմանեան Կայսրութիւնում*, Երեւան, ԳասՊրինտ, 2012, էջ, 578:

[3] Հ. Թոքմաճեան, *Այնթապի Ասեղնագործութիւն, Ա. Հատոր*, Հալէպ-Երեւան, Տիգրան Մեծ, 2015, էջ 93: 1882ին Այնթապ ժամանած Բժ. Ֆ. Շեփըրտը եւ կինը՝ Ֆենին, շրջագայելով գիւղական բնակավայրերում, տեսնում էին կանանց, ովքեր կրում էին հաստ կտաւից պատրաստուած կարմիր ու կապոյտ գոգնոցներ, որն իրենց ձեռքով էին ներկում ու ասեղնագործում ճերմակ հաստ դերձանով: Տեսնելով որ դրա վրայ ժամանակ էր ծախսում նրանք ձեռնարկում են նոյն աշխատանքը գործուածքների վրայ (Թոքմաճեան, էջ 98):

[4] Ոսկանեան, էջ 388:

[5] Համբարձում Երամեան, *ՅուշարձանՎան-Վասպուրականի, Հատոր Բ.*, Աղեքսանդրիա, տպագր. Արամ Ստեփանեանի, 1929, էջ 278:

[6] https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/bitlis/bitlisreligion/missionaries.html

[7] "Mid Toil and Tribulation," *The Missionary Herald, American Board of Commissioners for Foreign Missions*, Պոստոն, Մեսեչուսէց, 1915, Vol. CXI, էջ 457:

[8] Վահէ Հայկ, *Խարբերդ եւ Անոր Ոսկեղէն Դաշտը, Ա. Հտր.*, Նիւ Եորք, 1959, էջ 333, 504:

[9] Թ. Խ. Յակոբեան, *Պատմական Հայաստանի Քաղաքները*, Երեւան, Հայաստան Հրատ., 1987, էջ 202:

[10] Վ. Հայկ, էջ 457:

[11] http://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/bitlis/bitlisreligion/missionaries.html (պահպանուել է լուսանկար-բացիկ՝ մարտինցի երեք ասեղնագործ աղջնակների, որի դարձերեսին Շարլոթ Էլիի գրառումն է. պահւում է Մաունթ Հոլիոք Քոլէճի արխիւում):

[12] Ա. Սահակեան, *Դիւցազնական Ուրֆան եւ Իր Հայորդիները*, Պէյրութ, Հրատ. Ուրֆայի Յուշապատումի Յանձնախումբի, 1955, էջ 458-459:

[13] Հ. Մ. Պողոսեան, *Վասպուրականի Պատմութիւնից 1850-1900*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1988, էջ 293-5:

[14] Խ. Լեւոնեան, *Վան-Վասպուրական Աշխարհը*, խմբ.՝ Ե. Քասունի, Պէյրութ, տպարան՝ Design Kesdenian, 2013, էջ 164:

[15] Համբարձում Երամեան, *Յուշարձան Վան-Վասպուրականի, Հատոր Ա.*, Աղեքսանդրիա, տպ. Արամ Գասապեան, 1929, էջ 28:

[16] Պողոսեան, էջ 303:

[17] Հ.Ֆ.Պ Լինչ, *Հայաստան Ուղեւորութիւններ եւ Ուսումնասիրութիւններ, Բ. Հտր.*, Կ. Պոլիս, տպագիր Յ. Ասատուրեան եւ որդիք, 1914, էջ 106:

[18] Ե. Տէր-Մկրտչեան, *Գանձեր Վասպուրականի, Ա. Հատոր*, Պոստոն, տպարան Պայքար օրաթերթի, 1966, էջ 216:

[19] Լեւոնեան, էջ 170:

[20] Լ. Գազանճեան, *Վերածնունդ Վան-Վասպուարկանի, Մշակութային Ոսկեդար (1850-1950)*, Պոստոն, Տպ. Թումայեան եղբարք, 1950, էջ 136:

[21] Պողոսեան, էջ 304:

[22] Գ. Շէրենց, *Սրբավայրեր, Տեղագրութիւն Վասպուրականի-Վանայ Նահանգի Գլխաւոր Եկեղեցեաց Վանօրէից եւ Ուսումնարանաց*, Թիֆլիս, տպարան ընկ. «Վերիչեւ եւ Կամենմախէր», 1902, էջ 8-10:

[23] Գազանճեան, էջ 146:

[24] «Տաճկական Հայաստան, Միացեալ Ընկերութիւնք Հայոց, Վիճակագիր Վարժարանաց», *Արձագանք*, Թիֆլիս, Հփ 14, 1882 էջ 214:

[25] Ոսկանեան, էջ 269:

[26] Նոյն, էջ 329:

[27] Շէրենց, էջ 12:

[28] Պողոսեան, էջ 304:

[29] Լինչ, էջ 106:

[30] Շէրենց, 19:

[31] Նոյն, էջ 34, 42: Վանի ծխական ու մասնաւոր վարժարանների ցանկը տե՛ս նաեւ՝ «Նամակ Թիւրքիայից», *Մշակ*, 1895, թ. 146, էջ 3. նաեւ՝ Մասիս, «Արտաքին Տեսութիւն. Դպրոցական Գործը Վանում», *Մշակ*, 1898, թ. 76, էջ 3:

[32] «Նամակ Թիւրքիայից», *Մշակ*, 1895, Հփ 146, էջ 3:

[33] Շէրենց, էջ 13-14:

[34] Երամեան, *Հատոր Ա.*, էջ 455:

[35] Գազանճեան, էջ 139:

[36] Ս. Ջէյթլեան, *Հայ Կնոջ Դերը Հայ Յեղափոխական Շարժման Մէջ, Ա. Հտր.*, Լոս Անճըլըս, Քալիֆորնիա, 1992, էջ 94:

[37] Վ. Տերոյեան, *Միսիոներաբարեգործական Կազմակերպութիւնների Աշխատանքը Մերձաւոր Արեւելքում եւ Անդրկովկասում*, խմբ. ՝ Ռ. Սահակեան, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2008, էջ 35:

[38] Վ. Հայկ, էջ 384:

[39] Mrs. R.L. Ellen, "Has American Education for Girls Been of any Benefit to Van?," *Life and Light for Woman*, published by the Women's Boards of Missions, 1900:30, էջ 252, Պոստոն:

[40] http://www.houshamadyan.org/en/mapottomanempire/vilayet-of-bitlispaghesh/bitlis/religion/missionaries.html :

[41] Լեւոնեան, էջ 173:

[42] Պ.Ս.Մխիկեան, «Վանի Տօքթ. Ռէյնոլտսը», *Հայրենիք*, Պոստոն, 8 Օգոստոս 1955, էջ 79:

[43] Mrs. Ellen, էջ 253:

[44]
https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/bitlis/bitlis religion/missionaries.html

[45] Miss Grisell M. Mclaren, "Glimpses of Our School for Girls at Van, Turkey," *Life and Light for Woman*, 1905:35, էջ 62:

[46] Երամեան, *Հայրոր Ա.*, էջ 65:

[47] Երամեան, *Հայրոր Ա.*, էջ 92:

[48] Oksen Teghtsoonian, *From Van to Toronto: A Life in Two Worlds*, New York, Lincoln Shanghai, iUniverse, Inc., 2003, էջ 8:

[49] Լեւոնեան, էջ 294:

[50] "The Forty-first Annual Meeting of the Woman's Board of Missions," *Life and Light for Woman*, 1908:38, էջ 557:

[51] Մխիկեան, էջ 80:

[52] Նոյն, էջ 82:

[53] Երամեան, *Հայրոր Ա.*, էջ 439:

[54] Գազանճեան, էջ 294:

[55] Երամեան, *Հայրոր Ա.*, էջ 413:

[56] «Նամակ Թիւրքիայից, Վան, Փետրուարի 1ին», *Մշակ*, 26 Մարտ 1896:

[57] J. O. Barrows, *In the Land of Ararat, A Sketch of the Life of Mrs. Elizabeth Freeman Barrows Usher, Missionary to Turkey and a Martyr of the Great War*, New York, Chicago, Fleming H.Revell, 1916, էջ 85:

[58] Barrows, էջ 168:

[59] Փ. Արմենակ, «Ամերիկացիները Մեր Մէջ», *Աշխատանք*, 1917, Հմ 40, էջ 2:

[60] Ա.Մ., «Թիֆլիսի Փախստական Որբանոցները. Նպաստամատոյց Ընկերութեան Որբանոցը», *Վան-Տոսպ*, 1916, Հմ 31:

[61] Երամեան, *Հայրոր Ա.*, էջ 448, 453:

[62] Տերոյեան, էջ 36:

HANDCRAFT IN THE CURRICULUM OF VAN-VASPURAKAN'S SCHOOLS IN THE SECOND HALF OF THE 19TH CENTURY

(Summary)

ANI MKHITARYAN
amkhitaryan89@gmail.com

The article gives a brief overview of the inclusion of handcraft in the curriculum of girls' schools in the Van Vaspurakan region as of the 1850s. The author assesses the benefits of teaching handcraft in those schools and notes that it promoted the preservation and development of local traditional and popular art and served as a source of income to the families, thus improving their social conditions.

The author notes that teaching handcraft in schools was initiated mostly by American and European missionaries who opened schools in the region from the mid-19th century, taught this art and encouraged its spread through exporting/selling the items abroad. The paper argues that the proceeds of these handcrafts improved the economic conditions of local Armenian families.